119. ՀԱԼԱԼՆ ՈՒ ՀԱՐԱՄԸ

Երկու ախպեր են ըլում, մինը՝ հալալ, մինը՝ հարամ։ Տրանքտանիցը հաց են վեր ունում, քյընում իրանց բախտը փորձիլի։ Շատ են քյընում, թա՝ քիչ, էտ ասված ա գյուղում, ճըմպին սովում են։ Էտ հալալ ախպերը տեսնում ա, վեր հարամ ախպերը իրա փայ հացը իրանից թաքուն կերել ա։ Ճարը կտրած իրան հացը հարամ ախպոր հետ կես ա անում, ուտում են հու ճամպա ընդնում։ Վերչը սրանց ուտիլիքը պըրծնում ա։ Հարամ ախպերը հալալին թողնում ա մենակ, քյընում։

Էս հալալ ախպերը սոված, ծարավ կյալիս ա հքսնում մի ծորի, յաշում, տեսնում, վեր ըտեղ մի ճաղաց կա։ Ինքը իրան ասում ա. «Ըտեղ ուտելի պան կըլի, քյընամ տեսնամ»։ Կյալիս ա, մրտնում էտ ճաղացը, տեսնում վեր վեչ մի քիմսանա չկա։ Մրտնում ա մի քյունջ հու քուն ըլում։ Մի թուշում աչքը պաց ա անում, տեսնում, վեր մի կյուլ, մի առչ, մի աղվես զրուց են անում։

Կյուլը ասում ա. «Եկե՛ք, մեր կըլխովը հինչ անց ա կրցել՝ իրար պաղմենք»։ Աղվեսն ու առչը ռաղի են կենում։

Կյուլը ասում ա. «Էս հինչ տեղը մի կաղնի ծառ կա։ Էտ ծառի տակ մի պուլիկ վեսկի կա թաղված։ Ամեն օր ես քյընում եմ էտ ծառի կըլխովը շուռ կյալիս։ Հենց վեր շուռ եմ կյալիս պըրծնում՝ մին էլ տեսնում եմ մի էշ, մի վեչխար, մի կով, յա մի դանա հն կյալիս, փրռնում եմ ուտում, օրըս անց կրցնում»։

Առչը ասում ա. «Իմ բախտն էլ ա ծառից կախված։ Էտ ծառը ըստեղից հեռու չի, հենց էս ճըղացի կոխկին ա։ Էտ ծառի փըշակում ճանջեր են պուն տրել, մեղր են սարքում։ Ամեն օր քյընում եմ ուտում, օրըս ըտհենց անց կրցնում»։

Աղվեսը ասում ա. «Ես էլ մի անդին քար ունեմ, նրանով եմ յոլա քյընում։ Ամեն օր քյընում եմ, վեր ոնում, հաղ անում, միչեվ մի օրդակ, մի ղաղ, մի հավ կյալիս ա. փրոնում եմ ուտում, օրըս անցկրցնում։ Էտ իմ քարը հեռու տեղ չի, էս ճղացի կողքի քեռծի տակ ա»։ Կյուլը, առչը, աղվեսը էս սլանները պաղմում են, վեր կենում, ճղացիցը տուս կյալի, քյրնում։

Ըռավետը ծեքին էս տղեն վեր ա կենում, քյընում էս առչի ասած ծառը քըթանում, յաշում ա տեսնում, վեր առչը դուզ ա պագմել։ Ըստեղ, վեր մեղրով լավ կըշտանում ա, վեր ա կենում, քյընում կյուլի ասած տեղը։ Ծառի տակը քանդում ա, վեսկին հանում, ճամպա ընդնում, քյընում հսնում մի շեն։ Ըստեղ իրա հետի լավ-լավ տըներ ա առնում, ապրում։

Մի օր շնամեչն ա քյընում, տեսնում, վեր իրա ախպերը զըլիբ-զըլիր ըլած շորերով էկել փայ ա հվաքում։ Էս վեր տեսնում ա՝ տերտը ցավում ա, պիրում ա տուն հու ասում. «Ինձ ճընանչում ե՞ս»։ Հարամ ախպերը ասում ա. «Չէ՛, ես հինչ գիդամ, տու հո՞վ ես»։ Ըստեղ հալալ ախպերը ասում ա. «Միտտ ա, վեր ինձանից թաքուն քու հացը կերար, ինձ թող ըրիր հու քյընացիր»։

«Վա՛յ, ախպեր ջան,— ասում ա հարամ ախպերը,— խընթրում եմ ինձանից չնեղանաս, մի ղալաթ ա ըրել եմ, փոշման ըլել։ Հմի տու պատմի քու կըլխով անցկրցածը, գիդամ, վե՞նց ես ըսհենց հրստացել»։ Էս հալալ ախպերը նստում մին-մին պաղմում ա իրա կըլխով անցկրցածը։

Էքսի օրը էս հարամ ախպերը վեր ա կենում, հալալ ախպորիցը թաքուն քյընում էն ճաղացը։ Քըշերվա մի վախտը տեսնում ա, վեր էլի էն կյուլը, առչը հու աղվեսը էկան։ Ինքը իրան ասում ա. «Կա՛, չկա սրանք էլի վեսկի տեղ ըրած կըլեն, հմի կասեն, կըլսեմ, կքյընամ, կհանեմ, ես էլ հարուստ մարթ կըտանանամ»։

Կյուլը ասում ա. «Գյուղում եք հինչ կա, էն օրվանից, վեր էս ճըղացումը իմ կըլխի անցվածքը պաղմել եմ, էն օրից իմ մինը էրկու չի տանում, վերտեղ քյընում եմ հորսի տեղ՝ հորսկանի եմ ուստ կյալիս»։

Առչը ասում ա. «Քոնը ըսեցիր, հմի իմը լսի։ Էն օրից ետը Ես էլ եմ ամեն պանից զուրկ մնացել։ Իմ ոամիդը էն մեղրն էր, ուտում ի, ապրում։ Հմի էլ չկա։ Գյուղում չեմ, թա հո՞վ ա իմ փայը կտրել»։

Աղվեսը ասում ա. «Կա չկա մեղ ըստեղ լսող ա ըլել։ Էկեք մա̈ն կյա̈նք, բալքի ըստեղ ըլի, փռնենք, հախիցը կյա̈նք»։

Հարամ ախպերը էս վեր լսում ա, հարայ ա կանչում, ուզում ա, վեր փախչի։ Էլ թո՞ղը։ Սոված կյո̄ւլ ու առչից հարամ մարթ կըպրծնի՞։ Փոնում են հու տեղն ու տեղը տրա̈ն ուտում։

Ըստեղ են ասել, վեր հարամին հալալը կյալիս չի։